# 24. ՀԱՔՅԱԹ

## [Արջառածր[1]]

Ինում ա չինում, մին Թաքավեր ա ինում։ Էս Թաքավերին ի-րեք տղա յա ինում։ Ամենապուճուր տղան հա՛մ սերուն ա ինում, հա՛մ դուչաղ աղամարթ։ Կյամ ա մին վախտ էս Թաքավերեն մին ախսերդյ ա ինում, ամմա վրեչ ինսանու ղրտկերավ։

Մին օր Թաքավերը բյրնամ ա ձուրան ծիռնցը կյումր, տրեսնում ա, վրեր ուրան մին լավ ծիու մին անդուճը կաուչ։ Շատ ա Թաքա-վերն ըրմանում, թա էս հու՞ կինի ըրածը։ Կանչում ա Թաքավերն ուրան մեծ տղեն, ասում ա. «Էս բշեր բյինա ձիանուցը քշտին կաց, մըեյիթ կաց բյեղ, համ էլ սայաղ կաց, տրես էտ հո՞ւ ա վրեր մեր ծիին անդուճը կերալ ա»։

Մրեծ տղան կյամ ա կյումր, ամմա քըշերը քընավ ա ընցնում, դատ չի տրեսնում։ Թարավերն էքյսր կյամ ա, տրեսնում հի՞նչ, մհենդյ էլ ծիին մին անդուճը կաուչ։ Մհենդյ էլ մաչնակ տղեն ա դարկում։ Մաչնակն էլ ա կյամ, քընավ ընցնում, դատ չի տրեսնում։ Թարավերը կյամ ա տրեսնում, մհենդյ էլ ծիին պոչննեն ըն կերալ։

Էս գյնում Թաքավերը պուճուր տղեն ա դարկում, թա. «Քյի-նա՛ տրես, էս հի՞նչ ղեն ա»։ Պուճուր տղան կյամ ա, ամմա վա-խում ա, վրեր ուրան քոնն էլ տանի, տրա հետև մաննր մին պատառ տինակավ կտրում ա, յրրան աղ անում։ Սաղ քըշերն էլ

---

[1] Վերնագրված է մեր կողմից, տարբերելու համար (Ս. Հ.)։

մաննին մըրմոոցան քոնը տանում չի։ Մին էլ ա տըեսնում կես գիշերն. էշում ա տըեսնում. վըեր ուրա̈ն քուրը. վըեր իրէք վըննանի ար, հունց եկավ կյո̈մը նի մտավ, օզում ա, թա ծիին մատանա։ Թաքավերին պուծուր տղան նշան ա փըոնում և ուռզ նետը յըրա անում ուրա̈ն քվորը ծեոքը ծակում։ Քուրը փախչում ա ու նի մըննում ուրա̈ն ուրուրուցը։

Մին դոնում, մին քըշեր պուծուր ախպերը արաչ ա տըեսնում։ Ըրաղումն կյա̈մ ըն ասում, թա. «Մեր քուրր սաղ ցեղը բեղմա̈ա օտե փըչացնե, լա̈վն էն ա, վըեր տուք մհենգյանց ծեր կըլխեն ճարո տըեսնաք»։ Պուծուր տղան էս արաղը նաղլ ա անում թաքավերեն, ամմա թաքավերը մհա̈լ չի տինում։ Էքյսը էլհա պուծուր տղան արաղ ա տըեսնում, էլհա ըրաղումն ասում ըն, թա. «Մեր քուրր ծեր ցեղը, ծեր շըհա̈րը բեղմա օտե, փըչացնե. լավն էն ա. տուք ծեր կըլխեն ճարը տըեսնաք, ըստղան փախչիք ըզատվիք»։ Թաքավերեն տղան էլհա հորը նաղլ ա անում, ամմա թաքավերը էլհա մհա̈լ չի տնում։ Էս դոնում էլ թաքավերեն պուծուր տղան էշում չի. եր ա կենում կլո̈խ եր օնում, փախչում, քյինում։

Շատ ա քյինում, թա խըեզյ, թաքավերեն պուծուր տղան, կյա̈մ ա մին տեղ տուս կյամ, տըեսնում ա, վըեր ըստեղ էս ա մին էրկու հազար վեչխար ա ըրածում, առանց չոբան, առանց շուն։

Թաքավերեն պուծուր տղան ըստեղ կենում ա. էս վըչխարեն քըշտեն, մին վեչխար էլ մորթում, ոտում, շատ ար սովըծացաւ։ Ըրիգյունը, մըթնըժոռած վախտը թաքավերեն պուծուր տղան վեչխարն առաչն ա անում, պերում ըինան։ Տըեսնում ա էս ա մին բոռ օշափ. կաղնալ ա բինին մղակումը, շքեոր պեց ըրալ, մին-մին վեչխարը պեց ա թողնում ծեռքերը դիրավ քըսելով, շքըոմաչավը հըմըարում։

Թաքավերեն տղան մորթած վըչխարեն մորթին շոռ ա օնում, ինքն էլ վըչխարեն նհետ նի ա մըննում ըինան։ Էս օշափը վըեր լոխ վեչխարը հըմբարում, պըծնում ա, փըոնում ա մին վեչխար մորթում, ածում ղըղղանը իփում, մին միժմա̈հի վեր տինում, իփա̈ծ մըեսը տասնհինգյ տեղ փայ տըոնում, ըսկսում օտելը։ Թաքավերեն պուճուր տղան էդ մսերեն իրեք փայն ոտում ա։

Օշափը փայերն օտիլավ, օտիլավ կյամ ա, թա էն իրեք փայն էլ օտե, տեսնում ա կառըչ, ծեռքերը տես ա քըսում, տեն ա ըըսում, մըժմա̈հումը էլ մըես չինում։ Էդ վախտը օշափը կանչում ա. «Հո՞, կա ըստեղ, թող ծեն հանի, էս հու կերավ մսեն իրեք փայը. հո̈ւմ ըս, տուս եկ մեյդան, ծեն հանե»։

Թաքավերէն տղան սուվԹա սաս չանում, ամմա ծտըհէտը ա-
սում ա. «Ես ըմ, էս ինչ Թաքավերէն տղան ըմ.» Օշափը ալրահա-
հրնան...ա։ Ասում ա. «Վըեր իտի յա, Թաքավերէն տղա, եք ինձ
հետ մին տեղ ապրինք։ էնքան ես հըրըստոԹուն օնիմ, վըեր մըեչ
երկուսս էլ հերիքյ ա»։

Իստի օշափն ու Թաքավէրէն պուճուր տղան շատ դոստանում
ըն, բարեկամանում։ Մին օր էլ Թաքավէրէն պուճուր տղան հըրց-
նում ա օշափէն, Թա. «Պա ինքը խի՞ քոռ ա, հո՞ւնց ա իլալ, վըեր
քոռացալ ա»։ Օշափը նաղլ ա անում, ասում. «Մունք իրեք ախ-
պէր ինք. մեր հար, վըեր մըեռալ ինձ ժառանգոԹէն Թողից՝ մին
մհակ։ Էս մհակը մին է՞ն ջուռա հունար օնե, վըեր հուր վըեչ
Թխիս ծեռաց կռնէնե, վըեր մին էլ Թխիս, կսղանա։ Մին սանդր,
էս սանդրը մին է՞ն ջուռա հունար օնե, վըեր հին տեղ քըցիս, քո-
լուա, ցարլուա կռնէնա, էլ մարԹ կարէլ չի ընդեղավ անց կենա։
Մին բոԹըլ ճիրավ լըցած, էս բոԹուլն էլ էն ջուռա հունար օներ.
վըեր հինչ տեղ քըցիս ծով կըռնէնա։ Ախպէրքըս, վըեր էս պէ-
նը պլուզում ըն, կյամ ըն ինձ քոորցնում, ամմա կարում չըն, Թա
էդ շէներր բըԹէնան։ Ինձ դըկում ըն, խըեղյ վեչխար ըն տաս
ծըրանը շատ վեչխար էր օնում։ Մաշնակ ախպորըս վըչխըրնին
կարմուր ռանգըն լըն, իրանք էլ ըրածում ըն էն սարին քըմակեն,
ինձանա բեղ ամանաԹ սարեն էն դոլը բյինասմէ.. մաշնակ ախ-
պէոռ բըեղ կապանիս։

Թաքավէրէն պուճուր տղան էր ա օնում օշափէն հոր տված
մհակը վեչխարը Թուշ բշում մաշնակ ախպոր սարը։ Էա՜ վըե-
սահմանը անց ա կենում, Թաքավէրէն պուճուր տղան տըեսնում ա.
էս ա ըիպա իրան մի աժդահա կյամ ա, վըեր վըեննեն տական է-
րակ ա անես կյամ։ Վըեր հասնում ա օշափը, Թաքավէրէն տղան
էս մահակը յըբա ու պիրում։ Օշափը խընԹրում ա, Թա, մին էլ Թխի։
Թաքավէրէն պուճուր տղան ասում ա. «ԱԹալար բիր դեյիր[1]»։

Իրիկունը մաշնակ ախպորը հենդյ հազար վեչխարն առաշն ը-
րած պէրում ա բինա։ Օշափը Թաքիփ ա անում Թաքավէրէն պու-
ճուր տղէն դուշաղուԹյունը, համ էլ խընԹրում ա, վըեր էն մին սա-
րէն Թարափը իսկի բյինավէշ, էն մին սարին քըմակեն էլ
մըեծ ախպէրն ա ինում, էն անպատճառ կարող ա ուրան ըսպանէ.
«Իմ մըեծ ախպէրը,— ասում ա օշափը,— իմ մըեծ ախպոր վեչ-

---

[1] Պապերը մեկ են ասել

խարնեն տասսը հազար ըն. համ էլ էն ա իմ աչքերս էլ պահում ա, ծովումը մին տոն օնե. էտ տանն էլ մին ղութի կա. իմ աչքերս էտ ղութումն ա։ Օլմիա, օլմիա նրա հետ կովի փունվես. էն շատ զոռավ ա, կարել չըս նրա օվթան կյաս։ Ամմա գիտցալ չի կյալ, կարող ա պտահի ինքը քյեզ ջհից, ինքյ ալ էս շաքյարը տիր պիրանումըտ, կովեն վախտը թա վըեր էս շաքյարը բուսացավ. գյիդա, վըեր նա քյեզ հըղթելու ա։ Բեզմա ընտան մը լիմհրավ խափիս»։

Էքյսը Թաքավերին պուճուր տղան վեչխարը թուշ քշում ա մըեծ ախպորը սարը։ Եշում ա տըեսնում ղիբա ուրան ա կյամ մին աժդահա, վըեր կլոխը յըրգյինքյումն ա, վըեններըՙ ցափումը։ Օշափը կյամ ա, թա չէ, կոխ ա փըռնում Թաքավերին պուճուր տղին նհետ։ Սա օղում ա ընրան վըեր քըցի. էն էլ օղում ա ընրան վըեր քըցի. քաշ-քաշ ըն ինում. Թավիլ տամ։ Թաքավերին պուճուր տղան ըիրղան տըեսնում ա. վըեր պիրանեն շաքարը ըղուվանում ա։ Լհա էտ վախտն ա ինում, վըեր օշափին տըրխատանը պեց ա ընգյնում։ Թաքավերեն պուճուր տղան ասում ա. «Յա՛վաշ, տըր-խատանըտ կապե, ետըհետը ասիվեչ, թա տըրխատանըս պեց ըն-կած ա իլալ»։ Օշափը օղում ա, թա տըրխատանը զիրավ տա կապի. ալըղադոնում Թաքավերին պուճուր տղա, տուս կօնիս մհակը և մին դոնում հանց կթխիս, վըեր օշավին էլ տեղան կարե. չի եր կենա։

Թաքավերին պուճուր տղան քյնում ա ծովին մաչը ման կյամ. օշափեն տոնը քըթենում. յոր օնում ղութին. մին բոթուլ է անմա-հական ճուր, վեչխարն էլ առաչն ըրած իրիգունը կյամ ա տոն։ Թաքավերին պուճուր տղան Յարանահանդալ օշափեն աչքերը տնում ա տեղը, անմահական ճուրը քսում, օշափը ըսկ-սում ա տըեսնալ. ամմա աչքերը շիլգի յա տուս կյամ, ընդրա հե-տե, վըեր ծախ աչքը աչին ա տիրա՞լ. աչինըՙ ծախ։ Էս ոխճանը ետը, Թաքավերին պուճուր տղան օշափին ասում ա. «Ես ըիղմա քյինամ, տըեսնամ իմ հոր տոնը հինչ տեռավ»։

Օշափն ասում ա. «Տու եք ինձ անդուց կալ. բինալ մեր. բու քուր հինչ կա, կավուչ, լոխ կերալ ա, ծեր շհարումը էլ սաղ ինսան ու ջինս չկա»։ Թաքավերին պուճուր աղան եշում չի օշափեն խոս-քեն, եր ա կենում, թա քյինա։

Էդ վախտը օշափն ասում ա. դե վըեր իտի յա. ինքյ կալ բյըղ նհետ եր կալ մին սանդր, էրկու էն բոթըլ ճրավ լիգյր, իրեք սիպ-տակ. կարմիր մին էլ սև ծիուցը հաքյվեն մաղերան, էս մաղերից

վըերը վըեր պահես կրակեն յըրա, էն սհաթը բըշտիտ հազիր կինի։

Թարավերեն պուճուր տղան էս հրեղան ծիոցան մինը եր ա ինում, կյամ ճըրան հոր շիհարեն մին մոտեկ տեղ ծին պեց թող-նում, ինքյը մին լղար, ըստըկելիս ծի նստում, կյամ ուրանց տանը կյամ ա տրեսնում, վըեր հոր շըհարը ամայի յա տըեռալ, ինսան, ջինս կավուչ, ուրան հորն էլ քուրր կերած, կեսն էլ պատան կախ րրած։ Քուրը վըեր ախպորը տրեսնում ա, լոք ա տամ տեղան եր կենում, ասում ա. «Բարով ըս եկալ, ախպե՛ր, հինչա՞վ ըս եկալ»։

— Ծիով ըմ եկալ, ծին էլ հանե հըյաթումը կապած։

Քուրը տուս ա կյամ հայաթը ծիու մին վըեննը օտում, կյամ թա. «Ախպե՛ր, ծիդ իրե՞ք ոննանի ա իլալ»։

— Հա՛, քու՛ր ջան,— վըրխեյան նհետ ասում ա ախպերը։

Մին պաատտ կընայանը եսը, քուրը տուս ա կյամ տոոնը, ետ կյամ, թա. «Ախպե՛ր, ծիդ մի՞ն վըենանի ա եկալ»։ Մհենգյ էլ, թա. «Ծիդ փորսո՞ղ տայով ա եկալ»։

Խեղճ տղան էլ վախեյան նհետ ամեն ղոնում. «Հա, քուր ջան» ա ասում։

Քուրը վըեր մին էլ ասում ա, թա. «Ախպեր ծիդ փորսո՞ղ ա եկալ», Թարավերին տղան տուս ա կյամ, կարմիր ծիին հաքյվեն մազերը պահում կրակեն՝ էն սհաթը կարմիր ծին րռաչկեն հաղրր կաղնում ա։ Թարավերին պուճուր տղան թող ա ինում, նըստում, թռչում։

Մին խիլլա տեղ քյընալանը ետը կարմիր ծին ասում ա. «Թարավերին պուճուր տղա, մին ետ եշի, տե՛ս քու քուր կյա՞մ ա»։

— Հա՛, կյամ ա,— ասում ա Թարավերեն տղան։

— Հինչո՞վ ղըղար կինի։

— Մին դուշու ղըղար։

— Վըե՛շինչ, հայա հեռու վա։

Մին խիլլա վախտան ետը էլհա ծին հըրցնում ա. «Թարավե-րեն պուճուր տղա, մհենդյ ետ եշի, տես հինչո՞վ ղըղար ա»։ Թարավերին պուճուր տղան ետ ա եշում, ասում. «Մին մարթու ղըղար ա րրեում»։

— Թող րրա սանդրը,— ասում ա ծին։

Թարավերին տղան սանդրը թող ա անում, ուրան քըմակեն մին րոյուտ, ցարյուա ա ըհամ կյամ։

Մին խիլլա տեղ քյընալանը ետը ծին էլհա հըրցընում ա. «Թարավերին պուճուր տղա, մին ղըետ եշի, տըես քու քուր կյամ ա՞, յա հինչո՞վ ղըղար ա»։ Թարավերին տղան ետ ա եշում,

տեսնում, քուքը կյամ ա, ամմա մին ծտու ղըղար ա։ Կյարմոր ծին էլնա առաչ ա քյընամ. քյընամ ա. քյինամ։ Վըեր մին խիլլա անց ըն կենում, էլնա հըրցնում ա. «Թաքավերին պուձուր տղա, քուրդ կյամ ա՞, հինչո՞ւ ղըդար կինի»։

— Կյա՜մ ա, հա՛, մարթու ղըդար ա։

— Տեն քըցի ձրա՜վ լիգյը բոթուլը։

Ծրա՜վ լիգյը բոթուլը տըեռնում ա մին մրեծ ծով։ Քուրր կյամ ա ծովին դեմ ընկնում, օղում ա, թա անց կենա. կարում չի. ընկ-նում ա ծովը խեղդվում։

Թաքավերին պուձուր տղան քվորն անա ըզատվելանը ետը էլ ետ չի տեռնում օչափեն կոչտը։ Կյա՜մ ա մին թաքավերու վեղ, ծիան վեր կյամ, ծին պեց թողնում, ինքյը վըեննավ կյամ էս թա-քավերին շհա՜րը, կլխեն տերած մին քըչալու փափախ։

Էս շհա՜րեն ղարվազեն կաղնած մարթիքյ թողում չըն, թա քաղաք նի մննի։ Թաքավերեն պուձուր տղան ըղաչանք ա անում, թա. «Ես մին խեղճ մարթ ըմ, թուղեցեք քյընամ շհա՜րը, դո՜ւզ ա, խեղճ մարթ ըմ, ամմա ծեր թաքավերին կարող ըմ պետքը կյա՜մ»։

Դարվազեն քըշտին կաղնած մարթիքյ կյամ ըն թաքավերին կոչտը, հայտնում, թա. «Թաքավերն ապրած կենա, իստի մին մարթ ա եկալ, ինքը շատ սերուն, բոյավ-բուսաթավ, ամմա էն ա վըեր քաչալ ա, ասում ա. «Կարող ըմ թաքավերին ծառայիմ»։ Ա-սում ընք՝ ղազերը տանք, տանե պահի»։

— Հինչ կինի՞,—համաձայնվում ա թաքավերը։

Իստի էդ օրվանան թաքավերեն պուձուր տղան տըեռնում ա թաքավերին ղըզարածը։ Ամեն օր թաքավերին ղազերը քշո՜ւմ ա, պերում թաքավերին բախչան, հովուզնեն լիգյը ձրեըավ։ Ըռութա-նան ղազերը քշո՜ւմ ա ըստեղ, իրիկունը տոն պիրում։

Մին օր թաքավերին պուձուր տղա քաչալ ղըզարածը էլնա ղազերը քշո՜ւմ ա ըստեղ, պեց թողնում, թա ըրածեն, էն վեր ա ինքը, թեքյ ընկնում, մին քոլու տակ քնավ ընցնում։ Հունց ա ի-նում, էդ օրը թաքավերին պուձուր ախճիգյը ըստեղ ման կյալու փա կյամ, բաշմակսեյրի, կյամ ա տըեսնում, վըեր մին քոլու տակին ո՜ւրա՜նց ղըզարածը թեքյ ընկած, քոն իլած. փափախն էլ կլխան վեր ընկած։ Եշում ա տըեսնում, էս թաքավերին ախճիգյը. վըեր էս տղան դո՜ւզ ա, փափախը քըչալու փափախ ա, ամմա կլո՜խը քաչալ չի, մին սերուն, ղա՜շա՜նգյ, բոյավ, բուսաթավ ջա՜հիլ տղա, վըեր իսկի ո՜ւրա՜նց շհա՜րո՜ւմը իտինը ինիլ չի։

— Է՛յ, քա՛չալ, ե՛ր կաց,—հրաման ա անում թաքավերին

ախճիգյը։ Ղըզզարածը բերդան էր ա թռչում, վըեր ընկած փափախը յոր ոնում, կյխեն տինում։ Թաքավերին պուճուր ախճիգյը նըստում ա յաշայ զըզըրրածեն կողքին, սիրում սիրվում, մաննեն մըտանին էլ հանում բցում զըզզարած քըչալին մաննը։ Թա. «Տու վըս վըեր կաս, աշխարքը վըեր շոռ կյա, տու իմն ըս, ես՝ քունը»։

Անց ա կենում խեյլա վախտ, թաքավերին իրեք ախճիգյն էլ մըծացալ ըն, սիրունացալ, ալավ-ալավ ըն անում, մարթու քինալու հետև ճրնդ-ճրնդում ըն բյոք ըրած սազու սիմու նման։

Մին օր թաքավերին նազիր-վազիրնեն հըվաքվում ըն, թա. «Թաքավերն ապրած կենա, ախեր, ըխճկերքդ մըծացալ ըն, մարթու տալու վախտն ա։ Իրավունք տու, վըեր ըխճըկերքդ ուրանց անա մեր տըղոցը մաչան փեսացու հընտրին»։

Թաքավերն ասում ա. «Համաձայն ըմ, լավ կենի»։ Թաքավերը հրաման ա տեց թողնում ուրան երգչերումը, թա. «Ինչ տեղ լավ, սիրուն, քաշ տղա կա, թող հըվաքվին, վըեր իմ ըխճըկերքս ուրանց համար փեսա ճոկին»։

Նշանակված օրը թաքավերին վըեզին ազնիվ և նազիր-վեզիրներին տղերքը յոխ հըվաքվում ըն, ըստեղ ա կյամ և մեր քաչալ զըզզարածը։ Թաքավերին էրկու ախճիգյը հավան ըն կենում էրկու նազիրի տղաներին, էն վըեր ա պուճուրը ճոկում ա էս զըզըրրածենը։ Թաքավերը հավան ա կենում մեծ ու միջնակ ըխճկորանց փեսոցը, էն վըեր ա պուճուրինը, հավան չի կենում։ Հայտնում ա յոխճին, թա պուճուր ախճիգյը շիլ ա ընկալ, պետքա թաղացան հընդրես։ Էլհա կանչում ա նազիր-վազիրներին տղորցը, պուճուր ախճիգյը էլհա կյամ ա էս քըչալին ա փրոնում, թա. «Ես ըսպան ըմ ազում»։ Իրիրինջի հետ ա թաքավերը հայտնում, վըեր ախճիգյը շիլ ա ընգալ, իրիրինջի հետ ա հընարություն անել տալիս, ամմա պուճուր ախճիգյը էլհա քաչալ զըզըրրածեն ա ազում։ Թաքավերը կըրղնըվում ա, հրաման ա անում, վըեր էրկուսին էլ ըրցին զըղերին պըհնը։ Էն վեր ա էն էրկու ըխճերկորցը մհար օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անում, ուրախութուն անում։ Մին քանի վախտանը ետը հունց ա ինում, թաքավերը հիվանդանում ա։

— Թաքավերը կարող ա սըղանա, թա վըեր անմահական ճուր խմեւ։ Պա հո՞վ կյիրի, հո՞վ չի պիրիլ։ Թա. «Փեսաներր, նահանցա պյիման հո՞վ բիդի պիրի»։

Փեսաները հըրրարութուն ըն տրեսնում։ Ծոկում ըն յոխճա լավ ձիները, խուրջիններին լըցնում ըն լավ-լավ պըշարավ, վըեսկավ, ըրծաթավ և հըղի ըցնում։ Քաչալ փեսան էլ ա ասում, թա. «Ես էլ

կըքյինամ անմահական ձուր պիրելու։ Նըեստավը ծըծաղում ըն. տամ ըն մին քոսոտ ծի, չհարավը քյինալիս էլ հետան տնա անում, ծափ տամ, ծըծաղում։

Քաչալը չհարան տուս ա կյամ. թա չէ, ուրան քըչալեն փափախը պահում ա. հանում ա սև ծիու հաքյվին մազերը պահում կրակին։ Սև ծին հազըր ըռաչկեն կաղնում ա։ Թաքավերին պուճուր տղան, լոք ա տամ յըրան նըստում, քըշում։ Ինքյն էլ փոխվում, տըեռնում ա մին սերուն, նախշուն տղամարթ։ Քըշում ա ծին կյամ ա հըսնում թաքավերին էրկու փեսին, սահանց կլխին մին-մին զումիրզ թխում, ինքը թռչում. անց կենում։ Թաքավերին պուճուր տղան գյուղում ա, վըեր անմահական ձուրը քըթենվում ա երկու պեց ու խուփ ինող սարեն ղաթումը։ Թա վըեր մանի սարը, պեցված վախտը կըրեցավ նի մըննե և մինչելի խուփ ինելն էլ տուս եկավ, էն ա պրծավ, թա չէ՝ կըմնա ըրանքումը տփակած։ Թաքավերեն պուճուր տղան թուշ քշում ա սև ծին էն վախտը, վըեր սարը պեցվում ա։ Սև ծին թռչում, չուչան լըցնում. հանց տուս ա կյամ, վըեր հալա սարը հոպ կալած չի ինում։ Թաքավերին պուճուր տղան կյամ ա երկու հըղըցեն ձուկվելիս տեղը մին չաղիր վեր թողում, յըրան կյիրում. «Անմահական ձուր ըմ ծախում»։

Էս թաքավերին էրկու փեսան կյամ ըն, թա ըստըղավ անց կենան, տըեսնում ըն մին չաղիր, մաչին անմահական ձուր ըն ծախում։ Ուրխանում ըն, վըեր ըն կյամ, ասում, խոսում, ամմա ծախողն ասում ա. «Փողով ծախում չըմ, առանց փող ըմ տամ, ամմա մուշտարուն քըմակներին, էն փափուկ տեղերը փեչատ ըմ ձըխտում»։ Հինչ ըրած, փեսաները համաձայնվում ըն։ Թաքավերին պուճուր տղան էս փըսոցը շուշեքյր հըսարակ ձուրով լըցնում ա. տալիս ուրանց, պեց ա անում քամակնին, մին-մին փեչատ ձըխտում, թա. «Դե քյեցեքյ»։

Փեսեքը օրախ-օրախ կյամ ըն տոն, տուս օնում շուշերյը, թա. «Դե անմահական ձուրը պերալ ընք»։ Հաքյիմնին կյամ ըն եչում, ասում թա. «Էս անմահական ձուր չի»։ Կյամ ա քաչալը. պերում ա անմահական ձուրը։ Թաքավերին պուճուր ախճիղյը տանում ա հորը տամ։ Հարը խմում ա, սըղանում, ամմա քաչալ փըսեն թողում չըն մեյդան տուս կյա, ղըղերեն պունումն ըն պահում։

Մին քանի վախտան ետն էլ աղառու վա տըեռնում, տեղեն տակը ընկնում թաքավերին կնեգյր՝ թաքուհին։ Էլհա հաքյիմնին քյըննամ ըն կյամ, ամմա զատ չի տուս կյամ։ Մհենղյ էլ ասում ըն, թա. «Աղառուն կըլիվանա, թա վըեր ասլանու կաթ խմե»։

— Բա հո՞ւ կնարե, հո՞ւ չի ճարել։

Բա. «Դե փրսեքը կնարեն, էլ հո՞ւ բիդի նարեն» Էլնա փըսերքը հավըքվում ըն, ասյանու կաթ պիրելու ճոկում ըն, ըշխարքիս տակին հինչքան լավ ծի կա, տամ էս էրկու փեսին, խուրջիննին լավ-լավ պաշարավ, վըեսկավ, ըրծաթավ լըցնում, հղե քըցում։ Բաշային ասում ա. «Ես էլ կըքյինամ» Էլնա զիրավ ծըծաղում ըն, անաղ անում, մին քընձոտ ծի տամ, շիհարավ քյինալիս էլ ծըծաղում իրավ, մասխարա քըցում։

Խարավներին պուճուր տղան շըհարան տուս ա կյամ Թա չէ, տուս օնում սիպտակ ծիու հաքյվին մազերը, ուրուր ա քսում։ Սիպտակ ծին բուաշրին հազըր կաղնում ա։

Խարավներին պուճուր տղան Թող ա ինում սիպտակ ծին նըստում, յալլա՜, բըշում, քյինում հասնում Թաքավերեն էրկու փեսին, մին-մին կլխներին բամփում, Թըխում անց կենում, քյինում։ Քյինում ա, քյինում, կյամ ա մին մԹին ծմակ, տըեսնում ա մին Լըլ ասյան՝ ճուտերը չորս դոլն արած սասը կլոխն ա քըցալ, մի՞ն սաս ա հանում, մին սաս, վըեր սարեր, ծորեր, տըղտըղում ըն։

Խարավներին պուճուր տղան նշում ա տըեսնում, վըեր Լըս Լքյ ասյանը խաԹը պըցըրըցրած ա պահում, փուշ ա կի մտալ, վըռըրկալալ, ասյա էլ նշում չի, ալըահալ ծիան իլեր ա կյամ Թաքավերին պուճուր տղան, տուս օնում նետը, հանց Թուշ օնում էս էք ասյանին վըննին, վըեր նետը ծակում ա օռած տեղը, վահըր վըըըլխկալի քյինում ա, ասյանը դինջանում ա։

Ասյանն ուրան ճուտերին ասում ա.

— Հինչ տեղ վըեր ա, Լս հու վըեր ինձ խստի լավութուն ըրավ, ըըԹերյ պերեր։ Ճուտերը ման ըն կյամ, ըըԹենում Թաքավերի պուճուր տղին, պերում մոր կոշտը։

— Քու լավութոննեն տեղը հի՞նչ ըս օզում, ա՛ մարթ։

— Ասյանու կաթին ըմ օզում, օրիշ վեչինչ։

— Լա՛վ, պա հինչո՞ւմ կտանես, իմ կաթնը մին ա հինչու մաչ վըեր ածիս, Լնրան պըռավ ա, վըեր ամանը կըկոտրե, Լլ կարել չըս տանես, մինակ ասյանեն մորթուռը կկտրես տանես։ Քու լավությունդ մեծ ա, դրա հետ Լ Լլ ես քյեղ կտամ իմ ճուտերաս մինը, ամմա տու բերմա Լնրան հետ տեղ ըսպանես, մորթին հանես, վըեր ես սա՞ր ըոկանամվուշ, Թա չէ, քյեղ սաղ չըմ Թողնել։

Խարավներին պուճուր տղան ասյանեն ճոտը եր ա օնում, սիպտակ ծիեն յըա տնում, Թըռնում մին հեռու տեղ, մորԹում, մորԹին պերում տամ ասյանին, ասյանն էլ ուրան կաԹնը ածում ա,

տամ թաքավէրէն պուճուր տղեն, թա. «Կա, տա՛ր. հալալ ինի քեզ»։ Թաքավէրին պուճուր տղան եր ա օնում ասլանեն կաթնը. կյամ մին հղուցու ղըրաղեն չադեր վըեր թողում, յըրա՛ն կյիրում. «Ասլանի կաթն ըմ ծախում»։

Կյա՛մ ըն թաքավէրին էրկու փեսան, տըեսնում. վըեր մին մարթ ասլանու կաթն ա ծախում, ուրախանում ըն։ Վըեր ըն կյամ խոսում, ասում, կաթնը առնում։ Ամմա ծախողն ասում ա. «Ասլանես կաթնը փողավ չըմ ծախում։ Հու վըեր օղում ա, քըմակներին էն փափուկ տեղը փեչատ ըմ ձըխտում»։

Փեսեքը ռազի ըն ինում։ Թաքավէրին պուճուր տղան ասլանին կաթնեն տեղակ էծու կաթն ա տամ, շալվարնին էլ հանել տամ, փեչատնեն քըմակներեն ձըխտում, պեց թողնում։

Վըեր փեսեքը կաթնը պերում ըն թաքավէրեն կընգանը տան, հա՛քյիմնեն եշում ըն, տեսնում՝ էծու կաթնը։ Ասում ըն. «էս էծու կաթն ա։ Սա անպետք ա, օքութ չանելը»։ Կյա՛մ ա քաչալ ղըզարածը, պերում ա ասլանեն իսկական կաթնը. թաքավէրեն կընեգյը խմում ա, լիվա՛նում։ Ամմա քաչալ ղըզարածը մնամ ա էլնա ղըզերեն պունո՛ւմը։

Մին քանե վախտանը ետը, հունց ա ինում, հըրևան թաքավէրը եր ա կենում կռև կյա՛մ էս թաքավէրեն յըրա՛։ Դուշմաննեն ղոշունը շհա՛րր շհա՛րին հետան եր ունելավ, առաչ ա կյա՛մ։ Թաքավէրեն զորքը կարում չի, թա դուշմաննեն առաչը կտրե։ Թաքավէրեն պուճուր ախճիգյը տըեսնում ա, վըեր ուրա՛ն հորը երգյիրը ծեռքա քյինամ ա, ըղաչանք-պըղատանք ա անըմ մարթին, վըեր տուս կյա, ուրա՛ն հորը քյոմագ անե։

Թաքավէրեն պուճուր տղան նշա…ին խաթիրը կոտրում չի։ Տուս ա կյամ շհա՛րա՛ն, հանում ա սև ծիյին հա՛քյվեն մազը ուրուր քըսում։ Սև ծին ծարս-ծարս ինիլավ, հաղըր կաղնում ա ըռաչկին։ Թաքավէրին պուճուր տղան լոք ա տամ սև ծիյին յրա նըստում, թռչում կըռվեն ամենաթունդ տեղը, հինչքան ինքն ա կտորում, մին տասը էդքան էլ սև ծին ա վըեննեն տակը տամ, տըորում։ Թաքավէրը հեռու կաղնած թամաշա յա անում, թա հունց ա էս սև ծիյավէրը դուշմաննեն նեղը քցա՛լ։ Եշում ա, հայիլ-մայիլ ինում, ինքյն ուրա՛ն ասում. «Յարար էս հու վա՞, էս սև ծիավէրը»։

Էս կռվեն ամենաթեժ վախտը, թաքավէրը եշում ա տըեսնում, վըեր սև ծիյավէրը յարալու տեռավ, ծեռաց ջուրան ուրա՛ն յաղլուխը հանում ա, քըցում ծիյավէրին յրա՛, թաքավէրին պուճուր ար-

դան յաղլուխը յոր ա օնում, ամմա յարան չի կապում, անում ա ջուրումը, ինքն էլ՝ա կռև անում։ Դուշմանը կարում չի տիմանա, զորքը յավաշ-յավաշ նոսրանում ա, մնացածն էլ փըխչը-փախչի յա ընկնում, դալուն նշանց տամ։ Կտորվածը կտորվում ա, յարալուն վըեր ընկնում, սաղ մնացածն էլ փախչում ա, ջանն ըզատում։

Թարավերը շատ ա ուրախանում, հաղթության պատվին հանդես ա սարքում, զորքին, ժողովուրթին մեծ պատիվ ա տամ, ճաշ ա տամ, կյինի խըմըցնում։ Ըստեղ ա և մեր քաչալ ղըզարածը, վըերին ուխեն մհայ տեղ չկա, իսկյի մարթու հաշիվ չըն անում։ Թարավերեն պուճուր տղան՝ մեր քաչալ ղըզարածը, էլ հովսալա չանում, բաժակը եր ա օնում և ասում. «Թաքավերն ապրած կենա, յարար, տու իսկի դյուղում ըս, թա քեզ մհար հո՞ւ պիրեց անմահական ճուր։ Ես ըմ պերալ, ես, տըեսնո՞ւմ ըս ինձ։ Գյուդում ը՞ս, թարավե՛ր, թա հո՞ւ պերեց ասլանեն կաթնը թաքուհու մհար։ Թարավերն ապրած կենա, դյուղում ըս, թա հու տարալ էն հաղթությունը, վըերին պատվեն ըսօր ըստեղ հըվաքված ուրախություն ընք անում։ Էդ բոլորը ես ըմ ըրալ»։ Սաղ ժողովուրթը ըրեսնեն շու ըն տամ դիպա խոսող քաչալ ղըզարածը։

— Հինչպե՞վ ըս կարող էդ ասածներըդ հաստատիս,— ասում ա թարավերը։

— Ես ամեն մինին մհար օնիմ իմ նշանները։ Առաչինը խընթրում ըմ, թող վըեր ըու էրկու սիրեկի վեսերյըդ պեց աննեն իրանց բամակնեն և նշանց տան էն վեչատնեն, վըեր ես ճըրխտալ ըմ, մին դյնում անմահական ճուրի տեղ, ախպուրի ճուր տալավ, էն մին դյնումն էլ ասլանեն կաթնեն տեղակ՝ էծու կաթնը տալու մհար։ Մնաց դուշմանեն հաղթելը, ու էս ըու յաղլուխըդ, վըեր կովեն թունդ վախտը ինձ ավեր, թա յարալու ծեռըըս կապիմ, ամմա ես կըպեցի վեչ, տիրի ջուրըս։

Էս ասում ա թա չէ, կըլխան աեն ա ըրցում ըըչալեն փափախը, խալխը տըեսնում ըն, թա հինչըան դաշանդյ սերուն տղա յա էլալ քաչալ ղըզարածը։ Թարավերը շատ ա հավան կենում, կանչում ա կուշար, հըկաաան պաչում, օխտը օր, օխտը ըըշեր հըրսանիք անում, ուրխոթուն անում և կտակ անում, վըեր իրան թարավերությունը իրան մահանը ետը թարավերը նա ինի։

